



ՏՕՆ ՎԵՐԱՑՄԱՆ ՍՐԲՅ ԽԱԶԻՆ



ԺԱՄԱՄՈՒՏ

Պատուական եւ ամենայաղթ խաչիդ առջեւ խոնարհած՝ երկրպագութիւն կ'ընենք քեզի, Տէ՛ր, եւ մեր յանցանքներուն թողութիւնը կը խնդրենք, որովհետեւ անով դուն ջնջեցիր մարդկային ցեղի դատապարտութիւնը: Եւ հիմա, շնորհիւ աստուածային սուրբ Նշանիդ՝ երկնային խաղաղութիւնդ շնորհե՛՛ ամբողջ աշխարհին:

ՃԱՇՈՒ ՇԱՐԱԿԱՆ ԲԿ

Յաղթական եւ նոր օրհնութիւն երգենք միշտ բարձունքներու մէջ Զրիստոս թագաւորին, հաւատացեալ ժողովուրդ:

Որ եկաւ լուսաւորելու ընտրեալ սուրբ եկեղեցին եւ սուրբ Խաչով պսակեց, Անոր փառքը երգենք:

Այսօր մենք եւս տօնենք Նաւակատիքը սուրբ Խաչի Փրկողին, մատուցանենք Փառք ու պատիւ յաւիտեան:

ՄԵՍԵՂԻ (Սաղմոս 4, 7բ եւ 2)

Քու տեսքիդ լոյսը մեր վրայ շողաց եւ մեր սիրտը ողորուեցաւ ուրախութեամբ: Երբ քեզի դիմեցի արդարութեան համար, լսեցիր զիս, Աստուած իմ:

Դուն, որ նեղութեանս ատեն սրտի հանդարտութիւն շնորհեցիր ողորմե՛ ինձի եւ աղօթքս լսե՛:

ԸՆԹԵՐՅՈՒԱԾ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆ

**Պօղոս առաքեալին զաղատացիներուն ուղղած թուղթէն
(Գաղ 6, 14-18)**

Ես չեմ պարծենար, եթէ ոչ միայն խաչով մեր Տիրոջ Յիսուս Զրիստոսի, որով աշխարհը ինձի համար խաչուած է եւ ես խաչուած մըն եմ աշխարհի համար: Որովհետեւ ո՛չ թլփատութիւնը արժէք ունի եւ ոչ ալ անթլփատութիւնը, այլ՝ նոր արարածը: Եւ անոնց, որոնք պիտի հետեւին այս կանոնին, խաղաղութիւն եւ ողորմութիւն, ինչպէս նաեւ Աստուծոյ Իսրայելին: Այսուհետեւ, թող ոչ ոք խանգարէ զիս, ես Յիսուսի չարչարանքները կը կրեմ մարմինիս մէջ: Եղբայրներ՛, մեր Տիրոջ Յիսուս Զրիստոսի շնորհքը թո՛ղ ըլլայ ձեր հոգիին հետ. ամէն:



Ալէլուիա, Ալէլուիա,

Ինձի, քու ծառայիդ գօրութիւն տո՛ւր, քու աղախիկիդ զաւակը փրկե՛ եւ բարեհաճութեան նշան մը ցոյց տո՛ւր ինձի հանդէպ:

(Սաղմոս 85, 15)

Ալէլուիա:

ԱԻԵՏԱՐԱՆ ՓՐԿՈՒԹԻՒՆ

(Յովհ 3, 13-21)

Մեր Տէր Յիսուս Զրիստոս կ'ըսէ. «Ոչ ոք երկինք ելաւ, այլ միայն Ան, որ իջաւ երկինքէն. Մարդու Որդին, որ երկինքն է: Ինչպէս Մովսէս օձը բարձրացուց անապատին մէջ, այնպէս պետք է բարձրա-

նայ Մարդու Որդին, որպէսզի ամեն մարդ, որ հաւատայ անոր՝ ընդունի յաւիտենական կեանքը: Աստուած այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր Միածին Որդին տուաւ, որպէսզի ամեն մարդ,

որ հաւատայ անոր՝ չկորսուի, այլ՝ ընդունի յաւիտենական կեանքը: Որովհետեւ Աստուած իր Որդին չորկեց աշխարհ, որպէսզի աշխարհը դատէ, այլ, որպէսզի անով փրկուի աշխարհը: Ով որ կը հաւատայ անոր՝ չի դատապարտուիր, իսկ ով որ չի հաւատար՝ արդէն, իսկ դատապարտուած է, որովհետեւ չհաւատաց Աստուծոյ Միածին Որդիի Անունին: Եւ այս է դատաստանը. լոյսը եկաւ աշխարհ, իսկ մարդիկ սիրեցին անելի խաւարը, քան՝ լոյսը, որովհետեւ չար էին իրենց գործերը: Ով որ չարը կը գործէ, կ'ատէ լոյսը, կը խուսափի լոյսէն, որպէսզի չյայտնուին իր գործերը: Իսկ ո՛վ որ ճշմարտութիւնը կը գործէ, լոյսին կու գայ, որպէսզի յայտնի ըլլայ, թէ իր գործերը Աստուծմով եղած են»:



ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ

Հրաշագոծ Խաչելութիւնը

Աստուած համակ սեր է: Ան այնքան սիրեց մարդ արարածը, որ անոր փրկութեան համար զրկեց Իր Միածին Որդին, Զրիստոսը, ճշմարիտ Աստուածը, սուրբ Երրորդութեան երկրորդ անձը եւ մարդու Որդին: Յիսուս՝ անհուն Մերը, եկաւ՝ առաւ մեր բնութիւնը, բացի մեղքէն, չարչարուեցաւ, խաչուեցաւ ու երրորդ օրը յարութիւն առաւ մեռելներէն: Յիսուս Զրիստոս Նոյն սիրով յանձն առաւ խոնարհեցումը՝ մեզ բարձրացնելու համար: Ան մարդացաւ, որպէսզի արժեւորենք մեր անխուսափելի չարչարանքները ու հանդուրժենք մեր գողգոթան՝ անոր փրկչական իմաստ մը տալով:

Սովսես, խորհրդանիշը Զրիստոսի, հնազանդեցաւ Աստուծոյ ու պղնձեայ օձը բարձրացուց անապատին մէջ, որուն Նայող՝ օձէն խայթուած ամէն ոք, Տիրոջ ողորմութեամբ կը բուժուէր ու

կը փրկուէր մարմնական մահէն: Աստուծոյ սիրոյ փրկչական ծրագրով ու գթութեամբ Յիսուս եւս բարձրացաւ խաչ, Իր փառքին գահը, ու բոլոր անոնք, որոնք վիրաւոր էին մեղքով, ու խոր հաւատքով ու զղջումով Նայեցան Անոր, ազատագրուեցան չարին գերութենէն ու յաւիտենական մահէն: Իսկ դժոխքը մնաց յոռետես, յուսահատ ու չզղջացող մեղաւորին վայրը:

Մենք մեզի կը հարցնենք. թէ ի՞նչու չարը մեզ կը շրջապատէ ու կը փորձէ օգտագործել մեր մարդկային տկարութիւնները: Ի՞նչու բարին Աստուած, որ կարող է ամէն բան ընել, կը թոյլատրէ չարին աճումը: Ի՞նչու թոյլատրեց որ Իր Միածին Որդին եւթարկուի անբացատրելի տանջանքներու եւ մեղաւորները փրկէ իր անմեղ արիւնով: Ինչպէս որ մարդը ստեղծեց առանց իր կամքին, Ան չէ՛ր կրնար Նոյն ձեւով Յիսուսը



փրկել: Պատասխանը կը ստանանք խոկալով աստուածային անհուն սերը. Իսկ սուրբ Թովմաս Ագուիևացիի պատասխանը եղաւ. «Որպէսզի անելի մեծ բարիք քաղէ չարէն»:

Մեծագոյն հարցը, զոր շատ մը անհաւատներ մերժեցին, Մարդ Աստուծոյ խաչելութիւնն է: Իսկ մենք՝ քրիստոնեաներս կ'ըսենք, թէ այդ փրկութեան խաչն է եւ այս եղելութենէն մարդ արարածները աշխարհի պատմութեան մեծագոյն բարիքը քաղեցին, այսինքն մեղաւորին զղջումն ու փրկու-

թիւնը եւ խոնարհութեամբ վերադարձը դէպի Աստուած:

Վստահ ըլլանք որ Աստուած մեր չարչարանքներն ու նեղութիւնները կ'ընդունի ամբողջ մարդկութեան սրբութեան ու երջանկութեան համար: Հաւատանք թէ ինչ որ Աստուած կը ծրագրէ ու կը կատարէ՝ ամենայն բարին է մեր յաւիտենական կեանքին համար: Հաւատանք թէ Աստուած մեզ կը սիրէ ու մեր սիրոյն համար կարող է անըմբռնելին ըմբռնելի իրապաշտութիւն մը դարձնել:

Այնձարի **"Կարդինալ Աղաճանեան Սանուց Տուն"**-ին տնօրէնութիւնը, 2019-2020 տարեշրջանին համար ձրիաբար կ'ընդունի ծանր պայմաններու մատնուած հայ ընտանիքներու 5-15 տարեկան մանչ զաւակները:

Արձանագրութիւնները կը սկսին Հինգշաբթի, 1 Օգոստոս 2019-էն սկսեալ:

Վերամուտ՝ Երեքշաբթի, 17 Սեպտեմբեր 2019-ին:

Մանրամասնութեան համար դիմել տնօրէնութեան, Տէր Ալիշան Քին. Աբարդեանին, Հեռ. 03/382937:

Tel.: 01/ 570 559 - Fax: 01/ 570 558 e-mail: eparchy@armeniancatholic.org
www.armeniancatholic.org